

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Dictionnaire Diplomatique

«Դիւմագիտական Բառարան», հրատ.
«Միջազգային Դիւմագիտական Ճեմա-
րան»-ի, Փարիզ, 1934:

Մի քանի տարի է Փարիզում գոյու-
թիւն ունի Միջազգային Դիւմագիտա-
կան Ճեմարան անունով մի հիմնարկու-
թիւն, որի կազմի մէջ մտնում են 72
երկրների պետական մարդիկ, նախկին
վարչապետներ, արտաքին գործոց նա-
խարարներ, դեսպաններ, պատուիրակու-
թեանց պետեր եւն: Ճեմարանը պաշտօ-
նական բնոյք չունի, մասնաւոր կազմա-
կերպութիւն է, նապատակն է համախմբել
և գործակցութիւն առաջ բերել միջազ-
գային ժաղաքական ուժերի միջեւ: Իր
աշխատանքներն արտայայտում են պարբերական հաւաքոյքներով եւ զե-
կուցումներով, որոնք հրատարակում
են Ճեմարանի տեղեկագրի մէջ: Հայե-
րից այդ հիմնարկութեան անդամակ-
ցում են Գ. Նորատունեկեանը եւ Ա. Ա-
հարոնեանը, իբրեւ հայկական երկու
պատուիրակութեանց նախկին նախագահ-
ներ:

Միջ. Դիւման. Ճեմարանի վերջին եր-
րատարակութիւնն է «Դիւմագիտական
Բառարանը», մի հսկայ գործ, որին
աշխատակցել են 72 երկրների պատուա-
նող 584 պետական ականաւոր գործիչ-
ներ - 27 վարչապետներ, 47 արտաքին
գործոց նախարարներ եւ 512 դեսպան-
ներ, դիւմագիտական ներկայացուցիչ-
ներ, զանազան առաքելութեանց եւ
պատուիրակութեանց պետեր, հիւպատու-
ներ եւ այլն:

Բառարանի մէջ տեղ է տրած բարոր-
երկրներին: Կան պատմական ու ժաղա-
կական տեսութիւններ պետական զանա-

զան հարցերի մասին: Առաջ է բերւած
վիճակագրական հարուստ նիւթ, ինչ-
պէս եւ բազմաթիւ ժաղածքներ կարե-
ւոր վաւերագրերից: Ամէն մի յօդւածին
կցւած է աղբիւրների ցանկը: ցոյց է
տրած գոյութիւն ունեցած գրականու-
թիւնը հարցի մասին: Վերջապէս, իր-
բեւ յաւելած, դրւած են մի շարք մի-
ջազգային դաշնագրեր ու համաձայնա-
գրերի: Բառարանը հրատարակւած է
շատ շեղ եւ արժել 600 ֆրանկ:

Բառարանում տեղ է տրւած եւ կով-
կասեան նորակազմ պետութիւններին: Ազրբէշանի մասին գրել է այդ երկրի
պատուիրակութեան նախագահ Ալի Մար-
դան թէկ Թոփչիբաշին, Վրաստանի մա-
սին Ե. Պ. Գեգենսկորին, Հիւսիսային
Կալկասի Լեռնականների Հանրապետու-
թեան մասին՝ Հայդար թէկ Բամմատը:
Հայաստանի մասին գրել է Ա. Ալե-
քանդարներ՝ «Ներկայ Հայաստանի Միջազ-
գային Դրաւթիւնը», որից առաջ Բառա-
րանի նմբագրութիւնը դրել է մի նա-
խարան, ուր հակիրճ կերպով խօսում
է հայկական հարցի մասին մինչեւ Հաշ-
տուրեան վեհաժողովը:

Ա. Ալեքանդարնի գրւածքում նշանակ-
ւած են Հայաստանի ազատագրութեան
4 փուլերը. ա). Հայաստանի անկախու-
թեան յայտարարութիւնը 1918 թ. մա-
յիս 28-ին. բ). Հայաստանի անկախու-
թեան նախազումը. գ). Սեւրի դաշնա-
գրի սոորագրումը եւ դ). Հայաստանի
խորհրդայնացումը: Ապա յիշւած են
դէպքերը 1917 թ. վերջերից սկսած մին-
չեւ Լոգանի դաշնագիրը, առանձնապէս
ծանրանալով Հ. Հ. Պատուիրակութեան
կառարած դիւմագիտական ժայյերի
վրա: Վերջոյ, աւելացւած են մի ժաման-

կարն տեղեկութիւններ խորհրդային Միութեան եւ Հայաստանի վարչական-քաղաքական վիճակի մասին:

Այս գրածը, դժբախտաբար, ունի մի հիմնական թերութիւն. նա պարունակում է բազմաբիւ աչք ծակող փաստական սխալներ: Մէկը, որ կարդացել է Ա. Մանեկչշտամի գիրքը, ամշաւտ, կը նկատէ այդ սխալները, որոնք, ի հարկէ, չեն կարող չճգել ամբողջ գործի արժէքը:

Առաջ բերենք մի բանի նմոյշներ.

Հենց սկզբում ասած է, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել 1920 թ. նոյեմբ. 29-ին, այն ինչ Հայաստանը խորհրդային յայտարարւեց 1920 թ. դեկտ. 2-ին: Հայ բոլշևիկներն են, որ աշխատում են ցոյց տալ, թէ Հայաստանի խորհրդայնացումը արդիւնք է նոյեմբ. 29-ի բանուրագիրացիական յեղափոխութեան: Մենք չենք կարող ընդունել այդ շինծու պատմութիւնը. Հայաստանի խորհրդայնացման օրը դեկտ. 2 է, երբ սովորագրւեց համաձայնութիւն Հայաստանի կառավարութեան եւ Մոսկվայի ներկայացուցչի միջնեւ:

Ասած է, թէ՝ երբ 1918 թ. նոյեմբ. 11-ին սովորագրւեց զինադադարը, Հայաստանի Հանրապետութիւնը ուներ 27,000 քառ. քիլոմետր տարածութիւն: Ճիշտ չէ. այդ ժամանակ Հայաստանը ուներ հազիր. 11-12,000 քառ. քիլոմետր հող: Ճիշտ չէ, թէ Բրեստ-Լիտովսկի դաշնագրով Սուրբմալու անցաւ քիրքին. անցան միայն Բաքում-Արտահան-կարսի շրջանները:

Ասած է, թէ Բաքումի դաշնագրիը սովորագրւեց 1918 թ. յունիս 5-ին, այն ինչ սովորագրւել է յունիս 4-ին:

Հայաստանի Հանրապետութեան իրաւական նամաշումը ներկայացւած է 1920 թ. մայիս 10-ին, երբ հաշտութեան պայմանները հաղորդւեցին քիրքերին. Քիչ յետոյ, Հայաստանի անկախութեան վերջնական նամաշման վայրկեան հա-

մարտում է Սեւրի դաշնագրի սովորագրւութիւնը, 1920 թ. օգոստ. 10-ին: Ակներեւ հակասութիւն:

Ներկայ Հայաստանը, խորհրդային իշխանութեան տակ, ներկայացւում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի սահմաններում: Ճիշտ չէ. ըստ Բրեստ-Լիտովսկի դաշնագրին, ինչպէս տեսանք, Սուրբմալու մմում էր Հայաստանին. այսուղ խօս չկար եւ Շարուր-Նախիջևանի մասին, մինչդեռ ներկայ Հայաստանի հարաւային սահմանները որոշած են Կարսի դաշնագրով:

Լուրջ սխալներ են սպրել նաեւ խորհրդ. Միութեան եւ ներկայ Հայաստանի վարչական կազմի մասին խօսելիս: Խորհրդային Միութիւնը կառավարում է ոչ թէ Խորհրդային Ռուսաստանի 1922թ.-ի ինուն: 12 սահմանադրութեամբ, այլ Խորհրդ. Միութեան սահմանադրութեամբ, որ մշակւած է 1923 թ. յուլիս 6-ին եւ վերջնականապէս հաստատւած 1924 թ. յունի: 31-ին: Խորհրդային համազումարը այժմ ոչ թէ տարին մէկ նստաշրջան է ունենում, այլ՝ երկու տարին:

Այսանով սխալները չեն սպառում, բայց նրանք բաւական են ցոյց տալու համար, որ «Դիլանագիտական Բառարամի»-ի պատկանելի է շերտում Հայաստանը ներկայացւած է բոլորովին անբարար: Նման գործերը յանախ չեն հրատարակում. անհրաժեշտ էր օգտըւել սուեդիւած առիրից Հայաստանը եւ հայկական հարցը բաղաքական բարձր զարգացում, դիրք եւ ազդեցութիւն ունեցած հասարակութեան աւելի կատարեալ ձեւով ներկայացնելու համար: Բառարան տրւած սխալ նիւթը յետոյ ուղղելը շատ դժւար կը լինի. ապացոյց Լառուսի փոքր բառարանը, որ քանի տասնեակ տարի է հայը ներկայացւած է մի շալւարաւոր գէրեբէյի նկարով: